ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐԵԳԻՆ ՏԵՓԱՆՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ/ԷԿՈԿԵՆՏՐՈՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՄԲԻՈՆ

2019թ. մայիսի 17-ին Տուշայի համալսարանում (Վիտերբո, Իտալիա) տեղեկատվական օր էր՝ նվիրված Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Հայաստանի և Վրաստանի համալսարանների հետ հաջողված համագործակցության պատմությանը:

Այնուհետև, հաջորդ օրերի ընթացքում Գարեգին Տեփանոսյանը այցելեցիրմասնագիտական ուղղվածությանը հատուկմի շարք դեպարտամենտներ և լաբորատորիաներ Տուշայի համալսարանում, մասնավորապես՝

- Հողերի ֆիզիկայի լաբորատորիա, որն իրականացնում է հողերի ֆիզիկական հատկությունների որոշում: Ծանոթացելէ հողերի հատիկային կազմի (տեքստուրա) որոշման նպատակով հողի նմուշառման համար օգտագործվող դաշտային պարագաներին, հողերի հատակային կազմի որոշման համար կատարվող նախապատրաստական աշխատանքների առանձնահատկություններին, հողի առանձին ֆրակցիաների տարրանջատման մեթոդներին և սարքեր-սարքավորումներին:
- Տուշայի համալսարանի Գյուղատնտեսության և անտառագիտության դեպարտամենտի(DAFNE) պրոֆեսոր Raffaele Casa-ի ուղեկցությամբ այցելել էԿենսաբանական, ագրոպարենային և անտառայինհամակարգերի նորարարության դեպարտամենտի (DIBAF) անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) լաբորատորիա: Լաբորատորիայի ղեկավար պրոֆեսոր Antoine Harfouch-ի

ներկայացմամբ ծանոթացել է լաբորատորիայում իրականացվող ինովացիոն գիտահետազոտական աշխատանքներին, գերժամանակակից ԱԹՍ-ին, նրանց տեխնիկական առանձնահատկություններին և ստացվող մեծածավալ տվյալների (big data) մշակման ինովացիոն մոտեցումներին: Քննարկվել են հետագա համագործակցության հեռանկարներ, ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ:

կ.գ.թ.ԳարեգինՏեփանոսյան

29.05.2019թ.